

Չայաստան. Անցումային արդարադատության քայլերն առանցքային են պատմության մեջ շարունակաբար գրանցված մարդու իրավունքների խախտումներին անդրադառնալու գործում, գտնում է ՄԱԿ-ի փորձագետը

ԵՐԵՎԱՆ (24 նոյեմբերի, 2023թ.): ՄԱԿ-ի մարդու իրավունքների փորձագետն այսօր Չայաստանին կոչ է արել անցումային արդարադատության համապարփակ մեխանիզմներ հիմնել՝ խորհրդային իշխանության, ավտոկրատ կառավարությունների և Լեռնային Ղարաբաղի հակամարտության համատեքստում տեղի ունեցած մարդու իրավունքների խախտումներին անդրադառնալու նպատակով:

Ճշմարտության, արդարության, հատուցման և չկրկնվելու երաշխիքների խթանման հարցերով ՄԱԿ-ի հատուկ գեկուցող Ֆաբիան Սալվիոլին հայտարարել է, որ 1991 թվականին ԽՍՀՄ-ից Չայաստանի անկախացումից ի վեր իշխանությունները մի շարք միջոցներ են ձեռնարկել այդ խախտումների հետևանքները վերացնելու ուղղությամբ:

«Թեև այդ միջոցները չեն ներառվել անցումային արդարադատության գործընթացում և պաշտոնապես չեն համարվել նման օրակարգի մաս, քայլեր են ձեռնարկվել ռեպրեսիվ կամ ավտոկրատ ռեժիմների ժառանգությունը վերափոխելու ժողովրդավարական համախմբման, հետաքննելու հակամարտության ընթացքում հայ զինվորների կամ քաղաքացիական հասարակության իրավունքների խախտումները և փոխհատուցելու նրանց կրած վնասները», - այս մասին Սալվիոլին հայտնել է Չայաստան կատարած իր 9-օրյա այցի արդյունքում արված հայտարարության մեջ:

«Սակայն ճշմարտության որոնման, քրեական արդարադատության, մարդու իրավունքների նախկին խախտումների հիշատակման և վնասի հատուցման ուղղությամբ առաջընթացը շարունակական չի եղել», - ասել է նա:

Սալվիոլին Չայաստանի իշխանություններին կոչ է արել անկախ մեխանիզմ ստեղծել՝ այդ խախտումները հետաքննելու և գրանցելու, ինչպես նաև դրանք ներկա և ապագա սերունդներին հասանելի դարձնելու համար: Նա նաև կոչ է

արել դատախազության և դատական մարմիններին անհապաղ ակտիվացնել այդ խախտումների համար պատասխանատվության ենթարկելու ջանքերը:

Նա բարձր է գնահատել խորհրդային բռնաճշումների զոհերի, հակամարտության ընթացքում զոհված կամ անաշխատունակ դարձած զինվորների, հակամարտության քաղաքացիական զոհերի և 2008 թ. մարտի 1-ի իրադարձությունների զոհերի հարազատներին և տուժածներին փոխհատուցում տրամադրելուն ուղղված ջանքերը, սակայն նշել է, որ մարդու իրավունքների խախտման արդյունքում տուժած այլ անձինք դժվարությունների են բախվել փոխհատուցում ստանալու հարցում:

«Ես կոչ եմ անում կառավարությանը ձեռնարկել անհրաժեշտ օրենսդրական և վարչական միջոցներ՝ ապահովելու, որ ցույցերի համատեքստում ապօրինի բռնագրավման, պետական բռնաճշումների և չարաշահումների զոհ դարձած անձանց, ինչպես նաև իրավապահ մարմիններում կամ զինված ուժերում խոշտանգումների ենթարկված և կասկածելի հանգամանքներում մահացած անձանց տրվի մարդու իրավունքների խախտման զոհի հատուկ իրավական կարգավիճակ և, համապատասխանաբար, ապահովվի վնասի ամբողջական փոխհատուցում», - ասել է Սալվիոլին:

«1990-ականներից ի վեր երկիրը հստակ քայլեր է ձեռնարկել ժողովրդավարական և արդյունավետ ինստիտուտների հաստատման գործում: Այնուամենայնիվ, զարգացումը չի ընթացել սահուն կերպով և ահռելի մարտահրավերներ են առաջ եկել նախկին տարիների ընթացքում՝ ինչպիսին են. ընտրակեղծիքները, դատական համակարգի անբավարար անկախությունը, պետական համակարգում մեծածավալ կոռուպցիան և անհամաչափ ուժի կիրառումը անվտանգային և զինված ուժերում: 2019 թվականին ընդունված համապարփակ բարեփոխումների փաթեթը նպատակ էր հետապնդում շտկելու այս թերությունների մի մասը, բայց դրանցից շատերը դեռ իրականացման են ենթակա», - ասել է փորձագետը:

«Կառավարությունը պետք է հասարակությանը միանշանակ ազդանշան տա, առ այն, որ հանձն է առել անցումային արդարադատության համապարփակ գործընթաց, որն ուղղված է անցյալի չարաշահումները վերացնելուն, դրանց կրկնությունը կանխելուն և օրենքի գերակայության ամրապնդմանը», - նշել է Սալվիոլին:

Փորձագետը գտնում է, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերջին փուլերը՝ 2020 և 2023 թվականներին, հսկայական խնդիրներ են ստեղծել: «Իմ այցը Հայաստան համընկել է հակամարտության արդյունքում Լեռնային

Ղարաբաղից 110,000 հայերի բռնի տեղահանման հետ: Փախստականներին հյուրընկալող համայնքներում և Երևանում հանդիպել եմ իշխանության ներկայացուցիչների և փախստականների հետ, ականատես եմ եղել տեղահանված բնակչության ցավին ու անհետաձգելի կարիքներին, ինչպես նաև նրանց առաջնային և անհետաձգելի կարիքները բավարարելուն ուղղված իշխանությունների հսկայական ջանքերին», - ասել է նա: «Ես սոլիդարություն եմ հայտնում փախստականներին և բարձր եմ գնահատում իշխանությունների՝ նրանց օգնություն ցուցաբերելու ջանքերը», - ասել է նա:

Այցի ընթացքում Սալվիոլին հանդիպել է պետական պաշտոնյաների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, փախստականների և տուժածների ընտանիքների, ինչպես նաև միջազգային հանրության ներկայացուցիչների հետ: Նա նաև այցելել է հուշահամալիրներ, փախստականների ճամբարներ և հակամարտության տարածքներ:

Հատուկ զեկուցողը Մարդու իրավունքների խորհրդին իր այցի վերաբերյալ ամբողջական զեկույց կներկայացնի 2024 թվականին:

ԱՎԱՐՏ

Պրն. Ֆաբիան Սալվիոլին (Արգենտինա) ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի կողմից 2018 թվականին նշանակվել է [ճշմարտության, արդարության, հատուցման և չլուրջվելու երաշխիքների խթանման հարգեռով հատուկ զեկուցող](#): Նա մարդու իրավունքների պաշտպան է և դասախոս: Ֆաբիան Սալվիոլին Լա Պլատայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում միջազգային իրավունքի և մարդու իրավունքների պրոֆեսոր է: Նա դասախոսություններ է կարդացել Հյուսիսային Ամերիկյան և Հարավային Ամերիկյան, Եվրոպական, Աֆրիկյան և Ասիական բազմաթիվ երկրներում և համալսարաններում: Պարոն Սալվիոլին հեղինակել է մարդու միջազգային իրավունքի վերաբերյալ մի քանի գրքեր և հոդվածներ: 2009-2016 թվականներին նա հանդիսացել է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի անդամ, իսկ 2015-2016 թվականներին՝ նույն կոմիտեի նախագահը:

Հատուկ զեկուցողները Մարդու իրավունքների խորհրդի հատուկ փորձագետների կազմում են: Հատուկ փորձագետների կազմը՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համակարգում անկախ փորձագետների ամենամեծ մարմինը, խորհրդի փաստահավաք և մշտադիտարկման անկախ մեխանիզմների ընդհանուր անվանումն է, որն ուղղված է կա՛մ երկրի կոնկրետ իրավիճակներին կա՛մ թեմատիկ խնդիրներին աշխարհի բոլոր մասերում: Հատուկ փորձագետների կազմն աշխատում է կամավոր հիմունքներով. նրանք ՄԱԿ-ի աշխատակիցներ չեն և իրենց աշխատանքի դիմաց աշխատավարձ չեն ստանում: Նրանք անկախ են որևէ կառավարությունից կամ կազմակերպությունից և ծառայում են որպես անհատ:

ՄԱԿ-ի մարդու իրավունքներ, երկրի էջ՝ [Հայաստան](#)

Լրացուցիչ տեղեկությունների և լրատվական հարցումների համար խնդրում ենք կապ հաստատել.

Առաքելության ընթացքում՝ Տիկին Բրենդա Վուկովիչի հետ (+41 (0)79 444 3940 / brenda.vukovic@un.org)

Առաքելությունից հետո՝ Տիկին Բրենդա Վուկովիչի հետ (+41 (0)22 917 9635 / brenda.vukovic@un.org)

ՄԱԿ-ի այլ անկախ փորձագետների վերաբերյալ **լրատվական հարցումների համար** խնդրում ենք կապ հաստատել Մայա Դերուազի (maya.derouaz@un.org) և Դհարիշա Ինդրագուպտայի (dharisha.indraguptha@un.org) հետ :

Թվիթերում հետևեք ՄԱԿ-ի մարդու իրավունքների անկախ փորձագետների հետ կապված նորություններին **@UN_SPExperts**

Մտահոգվա՞ծ ես այն ամենով, ինչ տեղի է ունենում աշխարհում:

Պաշտպանի՛ր ինչ-որ մեկի իրավունքներն այսօր:

#Standup4humanrights և այցելիր կայք նշված հղումով՝

<http://www.standup4humanrights.org>
